Հավելված՝

Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Գյումրի համայնքի
ավագանու 2023 թվականի մարտի 15-ի
N 56-Ն որոշման

« Հավելված N 11՝

Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Գյումրի համայնքի
ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 09-ի
N 255-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀՈԳԵՀԱՆԳՍՏԻ (ՀՐԱԺԵՇՏԻ) ԾԻՍԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՄԱՏՈՒՑԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԸ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և մատուցելու թույլտվություն (այսուհետ՝ թույլտվություն) տալու կարգը:
2. Թույլտվությունը՝ համաձայն N 1 ձևի, տրվում է համայնքի ղեկավարի կողմից:
3. Թույլտվություն ստանալու համար իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը (այսուհետ՝ հայտատու) համայնքի ղեկավարին է ներկայացնում հայտ՝ համաձայն N 2 ձևի:
4. Թույլտվություն ստանալու համար հայտատուն համայնքի ղեկավարին ներկայացվող հայտի հետ պետք է ներկայացնի նաև իրավաբանական անձի գրանցման համարը կամ անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման համարը, անձնագրի լուսապատճեն, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքին համապատասխան գանձվող տեղական տուրքի վճարման անդորրագրի լուսապատճեն:
5. Թույլտվություն տալու մասին հայտի բավարարումը ձևակերպվում է համայնքի ղեկավարի որոշմամբ:
6. Թույլտվություն ստանալու համար հայտատուի կողմից ներկայացված հայտը և անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո 5 օրվա ընթացքում հայտատուին է հանձնվում տեղական տուրքին համապատասխանող ժամկետով հաստատված թույլտվությունը (N 1 ձև):
7. Եթե հայտատուի ներկայացրած փաստաթղթերը թերի են, ակնհայտ կեղծ կամ խեղաթյուրված, ապա հայտի մուտքագրման օրվանից 3 օրվա ընթացքում թույլտվություն ստանալու մասին հայտը վերադարձվում է՝ թերությունները շտկելու և կրկին ներկայացնելու նպատակով: Եթե հայտին կից ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, ապա դիմողին առաջարկվում է 7-օրյա ժամկետում համալրել այդ ցանկը:
8. Թույլտվություն ստանալու մասին հայտը մերժվում է, եթե հայտատուի կողմից չի կատարվել «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքին համապատասխան տեղական տուրքը, ինչպես նաև, եթե քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և մատուցման համար նախատեսված շենքերը և շինությունները չեն համապատասխանում Գյումրի համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 268-Ն որոշմամբ նախատեսված սահմանափակումներին, պահանջներին ու պայմաններին:
9. Թույլտվությունը չի կարող օգտագործվել այլ անձի կողմից՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

ՁԵՎ N 1

ԳՅՈՒՄՐԻ

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ N Ծ - 000000

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀՈԳԵՀԱՆԳՍՏԻ (ՀՐԱԺԵՇՏԻ) ԾԻՍԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՄԱՏՈՒՑԵԼՈՒ

Տրված՝ _____ _____ 20 թ.

Իրականացման և մատուցման թույլատրված ծառայության անվանումը

_____

Հայտատու իրավաբանական անձի անվանում, գրանցման համար, գտնվելու վայրի հասցեն կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, պետական հաշվառման համարը, հաշվառման վայրի հասցեն

_____

_____

Գործունեության տեսակի իրականացման վայրը

_____

_____

Թույլտվության գործողության ժամկետը՝ մինչև 20-- թվականի ----------

Համայնքի ղեկավար _____ _____

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Կ.Տ.

Ձև N 2

Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար
_____ - ին
(անունը, ազգանունը)

ՀԱՅՏ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀՈԳԵՀԱՆԳՍՏԻ (ՀՐԱԺԵՇՏԻ) ԾԻՍԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՄԱՏՈՒՑԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, պետական հաշվառման համարը կամ իրավաբանական անձի անվանումը, գրանցման համարը ----------
---
---

2. Անհատ ձեռնարկատիրոջ հաշվառման վայրի հասցեն կամ իրավաբանական անձի գտնվելու վայրի հասցեն ----------
---

3. Գործունեության տեսակի իրականացման վայրը, հեռախոսահամարը ----------
---
---

4. Ծառայության անվանումը, որի իրականացման և մատուցման թույլտվություն ստանալու մասին հայտ է ներկայացվում ----------

5. Թույլտվության ժամկետը ----------
/Նշել պահանջվող ժամկետը/

Ներկայացված տեղեկությունների իսկությունը
հաստատում եմ

/կազմակերպության պատասխանատու անձի անունը, ազգանունը, անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը/

---------- 20 թ.

Կ.Տ.

Հավելված N 12 `

Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Գյումրի համայնքի
ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 09-ի
N 255-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՈՐՀՐԴԱՆԻՇՆԵՐԸ (ԶԻՆԱՆՇԱՆ, ԱՆՎԱՆՈՒՄ) ՈՐՊԵՍ ՕՐԵՆՔՈՎ ԳՐԱՆՑՎԱԾ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆ ԿԱՄ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՄ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՖԻՐՄԱՅԻՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԸ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքում համայնքի խորհրդանիշները (զինանշան, անվանում) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան կամ ապրանքների արտադրության կամ աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման գործընթացներում, ինչպես նաև ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվություն (այսուհետ՝ թույլտվություն) տալու կարգը:
2. Թույլտվությունը՝ համաձայն N 1 ձևի, տրվում է համայնքի ղեկավարի կողմից:
3. Թույլտվություն ստանալու համար իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը (այսուհետ՝ հայտատու) համայնքի ղեկավարին է ներկայացնում հայտ՝ համաձայն N 2 ձևի:
4. Թույլտվություն ստանալու համար հայտատուն համայնքի ղեկավարին ներկայացվող հայտի հետ պետք է ներկայացնի նաև իրավաբանական անձի գրանցման համարը կամ անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման համարը, անձնագրի լուսապատճեն, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքին համապատասխան գանձվող տեղական տուրքի վճարման անդորրագրի լուսապատճեն:
5. Թույլտվություն տալու մասին հայտի բավարարումը ձևակերպվում է համայնքի ղեկավարի որոշմամբ:
6. Թույլտվություն ստանալու համար հայտատուի կողմից ներկայացված հայտը և անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո 5 օրվա ընթացքում հայտատուին է հանձնվում տեղական տուրքին համապատասխանող ժամկետով հաստատված թույլտվությունը (N 1 ձև):
7. Եթե հայտատուի ներկայացրած փաստաթղթերը թերի են, ակնհայտ կեղծ կամ խեղաթյուրված, ապա հայտի մուտքագրման օրվանից 3 օրվա ընթացքում թույլտվություն ստանալու մասին հայտը վերադարձվում է՝ թերությունները շտկելու և կրկին ներկայացնելու նպատակով: Եթե հայտին կից ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, ապա դիմողին առաջարկվում է 7-օրյա ժամկետում համալրել այդ ցանկը:
8. Թույլտվություն ստանալու մասին հայտը մերժվում է, եթե հայտատուի կողմից չի կատարվել «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքին համապատասխան տեղական տուրքը:
9. Թույլտվությունը չի կարող օգտագործվել այլ անձի կողմից՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Ձև N 1

ԳՅՈՒՄՐԻ

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ N Ծ - 000000

ՀԱՄԱՅՆՔԻ ԽՈՐՀՐԴԱՆԻՇՆԵՐԸ (ԶԻՆԱՆՇԱՆ, ԱՆՎԱՆՈՒՄ) ՈՐՊԵՍ ՕՐԵՆՔՈՎ ԳՐԱՆՑՎԱԾ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆ ԿԱՄ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՄ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՖԻՐՄԱՅԻՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ

Տրված՝ _____ _____ 20 թ.

Օգտագործելու թույլատրված համայնքի խորհրդանշի անվանումը

_____

Հայտատու իրավաբանական անձի անվանում, գրանցման համար, գտնվելու վայրի հասցեն կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, պետական հաշվառման համարը, հաշվառման վայրի հասցեն

_____

_____

Գործունեության տեսակի իրականացման վայրը

_____

_____

Թույլտվության գործողության ժամկետը՝ մինչև 20-- թվականի ----------

Համայնքի ղեկավար _____ _____

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Կ.Տ.

Ձև N 2

Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար
_____ - ին
(անունը, ազգանունը)

ՀԱՅՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ԽՈՐՀՐԴԱՆԻՇՆԵՐԸ (ԶԻՆԱՆՇԱՆ, ԱՆՎԱՆՈՒՄ) ՈՐՊԵՍ ՕՐԵՆՔՈՎ ԳՐԱՆՑՎԱԾ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆ ԿԱՄ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՄ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՖԻՐՄԱՅԻՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, պետական հաշվառման համարը կամ իրավաբանական անձի անվանումը, գրանցման համարը ----------
---
---

2. Անհատ ձեռնարկատիրոջ հաշվառման վայրի հասցեն կամ իրավաբանական անձի գտնվելու վայրի հասցեն ----------
---

3. Գործունեության տեսակի իրականացման վայրը, հեռախոսահամարը ----------
---
---

4. Համայնքի խորհրդանշի անվանումը, որի օգտագործման թույլտվություն ստանալու մասին հայտ է ներկայացվում ----------

5. Թույլտվության ժամկետը ----------
/Նշել պահանջվող ժամետը/

Ներկայացված տեղեկությունների իսկությունը
հաստատում եմ

/կազմակերպության պատասխանատու անձի անունը, ազգանունը, անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը/

---------- 20 թ.

Կ.Տ. »